Տեքստի ներմուծում

1. Մտեք *MS Word* տեքստային խմբագրիչի միջավայր:
2. Մկնիկի ցուցիչը տեղադրեք *KDWin*-ի տարբերանշանի վրա և հաջորդաբար սեղմելով աջ սեղմակը՝ ընտրեք Հայաստանի Հանրապետության դրոշը՝ (հայկական այբուբենը):
3. Մկնիկի ցուցիչը տեղադրեք *Home* ներդիրի *Font* խմբի տառատեսակի ցուցակը բացող ▼ նշանի վրա և ձախ սեղմակով բացված ցուցակից ընտրեք *Arial Armenian* տառատեսակը:
4. Մկնիկի ցուցիչը տեղադրեք *Home* ներդիրի *Font* խմբի տառաչափի ցուցակը բացող ▼ նշանի վրա և ձախ սեղմակով ընտրեք *20* չափը:
5. Ընտրեք տառատեսակի թավ ձևը. դրա համար մկնիկի ցուցիչը տեղադրեք *Home* ներդիրի *Font* խմբի **B** գործիքի վրա և սեղմեք ձախ սեղմակը:
6. Ներմուծեք *ինֆորմատիկա* բառը՝ առանց *ֆ* տառի՝ *ինորմատիկա*.
7. Այժմ *ֆ* տառն ավելացնելու նպատակով մկնիկի ցուցիչը տեղադրեք ներմուծված բառի *ո* տառից առաջ և ներմուծեք *ֆ* տառը:
8. Ներմուծված բառը սկսեք մեծատառով. դրա համար կուրսորը տեղադրեք բառի առաջին տառից առաջ և *Delete* ստեղնով ջնջեք *ի* տառը:
9. *Shift* ստեղնը սեղմած պահելով՝ ներմուծեք մեծատառ *ի* (*Ի*):
10. Տեքստային կուրսորը տեղափոխեք հաջորդ տող. դրա համար կուրսորը փոխադրեք տողի վերջ և սեղմեք *Enter* ստեղնը:
11. Այժմ տառաչափի ցուցակից ընտրեք *18* չափը:
12. Կրկին ընտրեք տառաշարի շեղ ձևը. դրա համար մկնիկի ցուցիչը տեղադրեք *Home* ներդիրի *Font* խմբի *I* գործիքի վրա և սեղմեք ձախ սեղմակը: Թավ ձևը հանելու համար **B** գործիքի վրա սեղմեք մկնիկի ձախ սեղմակը:
13. Ներմուծեք *6-րդ դասարան* տեքստը՝ *6* թիվը ներմուծելով թվային ստեղնաշարից:
14. Կուրսորը տեղադրեք տողի վերջում և սեղմեք *Enter* ստեղնը:
15. Տառաչափի ցուցակից ընտրեք *16* չափը:
16. Այժմ ընտրեք տառատեսակի ընդգծված ձևը. դրա համար մկնիկի ցուցիչը տեղադրեք *Home* ներդիրի *Font* խմբի **U** գործիքի վրա և սեղմեք ձախ սեղմակը: Շեղ ձևը հանելու համար *I* գործիքի վրա սեղմեք մկնիկի ձախ սեղմակը:
17. Ներմուծեք ձեր անունն ու ազգանունը (օրինակ՝ Պարսամյան Մարի):

Աշխատանք *Undo* և *Redo* գործիքների հետ

1. Մտեք *MS Word* տեքստային խմբագրիչի միջավայր:
2. Մկնիկի ցուցիչը տեղադրեք *KDWin*-ի տարբերանշանի վրա և հաջորդաբար սեղմելով աջ սեղմակը՝ ընտրեք Հայաստանի Հանրապետության դրոշը՝ (հայկական այբուբենը):
3. *Home* ներդիրի *Font* խմբից ընտրեք *Arial Armenian* տառատեսակն ու *12* տառաչափը:
4. Իրարից մեկ բացատանիշ հեռավորությամբ ներմուծեք ձեր անունն ու ազգանունը:
5. Մկնիկի ցուցիչը տեղադրեք անվան վերջին տառից հետո և սեղմեք բացատանիշ ստեղնը:
6. Ընտրեք գործիքն ու կատարված վերջին գործողությունը՝ երկրորդ բացատանիշի ներմուծումը, դարձրեք չեղյալ. այժմ անվան և ազգանվան միջև միայն մեկ բացատանիշ կա:
7. Այժմ ընտրեք գործիքն ու վերականգնեք նախորդ քայլում չեղյալ դարձրած գործողությունը՝ անվան ու ազգանվան միջև կրկին երկու բացատանիշ սահմանելով:
8. Մկնիկի ցուցիչով ընտրեք արագ հասանելիության վահանակի (*Undo*) գործիքի աջ մասում գտնվող ▼ նշանը:
9. Բացված գործողությունների ցուցակից ընտրելով վերջին փոփոխությունը՝ չեղյալ դարձրեք այն:
10. Նույն եղանակով չեղյալ դարձնելով կատարված բոլոր գործողությունները՝ դատարկ փաստաթուղթ կստանաք՝ ջնջելով նաև ներմուծված անունն ու ազգանունը:
11. Տեքստային խմբագրիչի հետ աշխատանքն ավարտեք՝ օգտվելով պատուհանի փակման կոճակից: Փաստաթղթի պահպանման վերաբերյալ հարցին պատասխանեք *NO* կոճակի սեղմումով: